Արձանագրություն N 2
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/30Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ մեկնարկ՝ 27.09 2022թ.
ժամը 10:00:
ավարտ՝ 10.10.2022թ.
ժամը 16:30:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Հարություն Սեդրակյան - ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության ճանապարհային լաբորատորիայի բաժնի պետ

Հանձնաժողովի անդամներ՝

Արամ Խաչատրյան - ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ

Մարտիկ Ստեփանյան - ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության ճանապարհային քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ

Լուսինե Զաքարյան - ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության ճանապարհային քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ

Մանե Մալխասյան - «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի պայմանագրերի կառավարման մասնագետ

Գնումները Համակարգող

Կարեն Բաբախանյան - ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի փորձագետ

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և հասցեները

1.1 ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/30Շ» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել

N	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը	Կապի միջոցը էլ.փոստ, հեռ.համար
1.	**Բիլդինգ Կապիտալ ՍՊԸ**	ՀՀ, ք. Երևան, Հր.	buildingcapital@mail.ru

		Քոչարի 4	+374 77 325718
2.	**Գլավդորստրոյ ԲԸ**	ՌԴ, ք.Մոսկվա, Վերնայա 1/4	glavdorstroy.ao@inbox.ru +374 33 010074
3.	**Վեհ Իշխանասար ՍՊԸ**	ՀՀ, ք. Սիսիան, Կամոյի 22	afoyan73@mail.ru +374 77 411229
4.	**Քյավառ Սերվիս ՍՊԸ**	ՀՀ, ք. Գավառ, Ազատության 41/5	qyavar.servis@mail.ru +374 94 067057

2. *Տեղեկատվություն՝ հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին*.

2.1 Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

3. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 Մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ.

N	Մասնակցի անվանումը	Արձանագրված անհամապատասխանությունը
1.	**Բիլդինգ Կապիտալ ՍՊԸ**	Անհամապատասխանություններ առկա չեն
2.	**Գլավդորստրոյ ԲԸ**	Հավելված 1-ում բացակայում է հրավերով սահմանված անբարեխիղճ մրցակցություն թույլ չտալու պարտավորությունը, Ծավալաթերթ-նախահաշվում բացակայում է հրավերով սահմանված հետևյալ պարտադիր պայմանը <<Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ Շահույթը՝ 11% և ԱԱՀ-ն՝ 20%>>: Հայտի փաթեթում ներառված չէ համապատասխան լիազորագիր:
3.	**Վեհ Իշխանասար ՍՊԸ**	Հավելված 1-ում բացակայում է հրավերով սահմանված անբարեխիղճ մրցակցություն թույլ չտալու պարտավորությունը:Ծավալաթերթ-Նախահաշվի <<Ընդամենը չնախատեսված ծախսեր>> տողի գումարը տոկոսային արտահայտությամբ պակաս է կշիռների համար հրավերով սահմանված 10 տոկոս թույլատրելի շեղումից:
4.	**Քյավառ Սերվիս ՍՊԸ**	Ծավալաթերթ-նախահաշվում բացակայում է հրավերով սահմանված հետևյալ պարտադիր պայմանը <<Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ Շահույթը՝ 11% և ԱԱՀ-ն՝ 20%>>:

Հաշվի առնելով արձանագրված անհամապատասխանությունները գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետի պահանջները որոշեց «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/30Շ» ծածկագրով գնման ընթացակարգի բացման և գնահատման նիստը կասեցնել և մասնակիցներին առաջարկել 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Գնահատող հանձնաժողովի նիստը վերսկսել 30.09.2022թ. ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Տվյալներ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին.

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետի պահանջները մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատող հանձնաժողովը գնահատում է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և գնի նվազեցման միաժամանակյա բանակցությունները.

Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	ՉԱՓԱԲԱԺԻՆ 1 **Մ-4-Ակնաղբյուր ավտոճանապարհի 2,85կմ հատվածի և դեպի Մատուռ տանող 0,246 կմ ճանապարհի հիմնանորոգման աշխատանքներ**	
	Նախահաշվային գին 225 210 861 ՀՀ դրամ	
Բիլդինգ Կապիտալ ՍՊԸ	200 000 000	240 000 000
Գլավդորստրոյ ԲԸ	187 500 000	225 000 000
Վեհ Իշխանասար ՍՊԸ	187 669 337,5	225 203 205
Քյավառ Սերվիս ՍՊԸ	187 536 385	225 043 662

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և գնահատող հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման պայմանների, տևողության, օրվա, ժամի և վայրի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

6. Գնի նվազեցման միաժամանակյա բանակցությունների արդյունքները և հայտերի գնահատման ամփոփումը

Գնի նվազեցման միաժամանակյա բանակցությունները տեղի ունեցան 06.10.2022թ. ժամը 15:00-ին, ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3 հասցեով: Գնի նվազեցման միաժամանակյա բանակցությունների արդյունքում մասնակիցների կողմից ներկայացվեցին նոր՝ նվազեցված գնային առաջարկներ, որոնք ներկայացվում են ստորև.

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	ՉԱՓԱԲԱԺԻՆ 1 **Մ-4-Ակնաղբյուր ավտոճանապարհի 2,85կմ հատվածի և դեպի Մատուռ տանող 0,246 կմ ճանապարհի հիմնանորոգման աշխատանքներ**	
	Նախահաշվային գին 225 210 861 ՀՀ դրամ	
Վեհ Իշխանասար ՍՊԸ	187 416 667	224 900 000
Գլավդորստրոյ ԲԸ	187 500 000	225 000 000
Քյավառ Սերվիս ՍՊԸ	187 536 385	225 043 662
Բիլդինգ Կապիտալ ՍՊԸ	200 000 000	240 000 000

Հիմք ընդունելով գնի նվազեցման միաժամանակյա բանակցությունների և գնահատման արդյունքները գնահատող հանձնաժողովը ***որոշեց***.

- Որպես գնման ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարող և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/30Շ» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել Վեհ Իշխանասար ՍՊԸ-ին:
- Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:
- <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:
- Պայմանագիր կնքելու նպատակով անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում գնման գնի 10 (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի 30 (երեսուն) տոկոսի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

7. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Հ. Սեդրակյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Խաչատրյան

Մ. Ստեփանյան

Լ. Զաքարյան

Մ. Մալխասյան

Գնումները համակարգող՝ Կ. Բաբախանյան